ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2022թ. N ՄՈ/160 -2022

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N ՄՈ/140-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հեղինե Հունանյանի 2022 թվականի մարտի 11-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/140-2021 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 7 հավելվածի 3-րդ կետում «Հունանյան Հեղինե» բառերը փոխարինել «Հարությունյան Գայանե» բառերով,

2) որոշմամբ հաստատված N 21 հավելվածի 2-րդ կետում «Հունանյան Հեղինե» բառերը փոխարինել «Հարությունյան Գայանե» բառերով,

3) որոշմամբ հաստատված N 49 հավելվածի 1-ին կետում «Հունանյան Հեղինե» բառերը փոխարինել «Հարությունյան Գայանե» բառերով,

4) որոշմամբ հաստատված N 52 հավելվածի 1-ին կետում «Հունանյան Հեղինե» բառերը փոխարինել «Հարությունյան Գայանե» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

14.03.2022

VERIFIED OCSP 14.03.2022 09:13:07 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ